

5778



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար



Հակոբ Սիմիոյան

«01» 04 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 088 - 25

Նախաձեռնող՝

«Հիդրեն Գոլդ» ՍՊԸ

Թալին համայնք, Արագածավան բնակավայր, Գործարանային 3/1

Գործունեությունը՝

Թալին համայնքի Արագածավան բնակավայրի
Արագածի պեռլիտի հանքավայրի օգտակար հանածոյի
արդյունահանում

Արագածոտնի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 088 - 25

«01» սեպտեմբեր 2025թ.

Արագածի պեռլիտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «Հիդրեն Գոլդ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ), նախագծային փաստաթղթեր

Տեղադրման վայրը՝ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Արագածավան բնակավայր

Ներածական մաս. Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրում «Հիդրեն Գոլդ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն, այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Հանքավայրի համար Ընկերության կողմից հայցվող տարածքի հողը Թալին համայնքի Արարագածավան բնակավայրի՝ համայնքային սեփականության 02-016-0219-0657 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության արոտավայր է:

Նկարագրական մաս. Արագածի պեռլիտի հանքավայրը տեղակայված է այդ հոսքի հարավ-արևմտյան մասում և ընդգրկում է մոտ 5.4 կմ² մակերես, որտեղ պեռլիտների հզորությունը ըստ հետազոտման տվյալների հասնում է 67 մ:

Հանքավայրի տարածքը հանդիսանում է Արագած լեռան հարավ-արևմտյան լանջի շարունակությունը և բնութագրվում է հարթավայրաբլրային ռելիեֆով:

Հայցվող տարածքի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°21'8.56" հյուսիսային լայնություն, 43°42'32.02"- արևելյան երկայնություն:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են երրորդական և չորրորդական հասակի ապարները: Ապարներն իրենցից ներկայացնում են անհամաչափ

կուտակումներով տեղակայված պեռլիտ-պեմզային ապարներ: Ժամանակակից դեյուվիալ-այուվիալ-պրոյուվիալ նստվածքները ներկայացված են ավազակավերով, ավազներով, խճով, կոպիճով, անկյունաձև, կիսակլոր և կլոր կտորներով, գնդիկների տեսքով, տեղ-տեղ մինչև 30 սմ հզորությամբ հողաբուսական շերտով: Այդ ապարների հզորությունը տարածքում տատանվում է 0.0-ից մինչև 1.2 մ՝ միջինը կազմելով 0.5 մ:

Արագածի պեռլիտների հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 19.11.1976թ.-ի №7732 արձանագրությամբ հետևյալ քանակություններով և կարգերով.

Պաշարների կարգը	Վերջնարտադրանքը	
	փքեցված պեռլիտ, հազ.մ ³	կանազիտ, հազ.մ ³
B	44069.4	31789.0
C1	47557.6	46154.6

Ընկերության կողմից բացահանքի հայցվող տարածքը կազմում է 5.09 հա, Բացահանքի տարեկան արտադրողականությունը՝ 56190 մ³, ծառայման ժամկետը՝ 20 տարի:

Հանքավայրի տարածքում մակաբացման ապարները ներկայացված են մինչև 1.18 մ հզորությամբ: Ժամանակակից առաջացումները ներկայացված են հողաբուսական շերտով և պեռլիտի կտորներով խառը ավազակավերով: Օգտակար շերտախմբի մակերեսային տեղադիրքը, գրունտային ջրերի բացակայությունը և մակաբացման ապարների հզորությունը ստեղծում են բարենպաստ պայմաններ հանքավայրի շահագործումը բաց եղանակով, առանց հորապայթեցման աշխատանքների իրականացնելու համար: Տրամադրվող տարածքում բացակայում են մակերևութային ջրային ռեսուրսները, ստորգետնյա ջրային հոսքերը, սողանքային և գեոդինամիկ երևույթները:

Հայցվող տարածքը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով (ըստ ArmWGS-84 (ARMREF 02) համակարգի) հետևյալն են.

- 1) 4469387.8061, 8389967.6887 4) 4469412.4287, 8390393.1672
- 2) 4469581.0860, 389964.8681 1) 4469387.8061, 8389967.6887
- 3) 4469457.1788, 8390394.9517

Բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- բացահանքի առավելագույն երկարությունը – 448 մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը – 192 մ,
- օգտակար հանածոյի առավելագույն հզորությունը – 56 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը – 30.276 մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը – 1541.2 հազ.մ³,
- օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը – 1123.8 հազ.մ³
- մակաբացման ապարների միջին հզորությունը – 1.18 մ,



- մակաբացման ապարների քանակը – 60070 մ³,
- օտարման մակերեսը – 5.09 հա (50905 մ²)
- մակաբացման միջին գործակիցը - 0.39 մ³:

Հանքավայրի մշակման համար ընտրվել է ընդլայնական, խորացող, մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝

- աշխատանքային հանքաստիճանի բարձրությունը - 5 մ,
- հանքաստիճանի թեքության անկյունը - 55°,
- հանքակողերի թեքության անկյունը - 45°,
- անվտանգության առափնների լայնությունը - 2 մ:
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը - 30 մ:

Բացահանքում արդյունահանումը նախատեսվել է առանց հորատապայթեցման շխատանքների՝ էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրի միջոցով: Օգտակար հանածոյի արդյունահանման ենթակառուցվածքների (բացահանք, արդյունաբերական հրապարակ, աշխատանքային հրապարակ, լցակույտ) ստեղծման արդյունքում ժամանակավորապես օտարվելու է մոտ 6.0 հա տարածք, այդ թվում՝ 5.09 հա բացահանքի համար, 0.86 հա լցակույտերի և 0.015 հա արտադրական հրապարակի համար:

Մակաբացման ապարներն առանց նախնական փխրեցման նախատեսված են բարձել ավտոինքնաթափեր, տեղափոխել ու կուտակել սկզբում բացահանքի սահմաններում, այնուհետև՝ բացահանքի բացված հատակին՝ ներքին լցակույտում: Մակաբացման ապարների հավաքումը, կուտակումը, տեղափոխումը 5-10 մ հեռավորությամբ նախատեսված է կատարել բուլդոզերի օգնությամբ:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո նախատեսված է արդյունահանման հետևանքով խախտված տարածքների տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա/վերականգնում:

ՇՄԱԳ հաշվետվությունում գնահատվել է արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմանն ուղղված մշտադիտարկումներ:

Փորձաքննական հիմնավորումներ. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է Օրենքին և օրենսդրությանը համապատասխան:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Արագածոտնի մարզպետարանը, Թալին համայնքը, Արագածավան բնակավայրի շահագրգիռ



հանրությունը, որոնց կողմից ներկայացված կարծիքները հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում և եզրակացությունը կազմելիս:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության փուլերում նախատեսվող գործունեության վերաբերյալ Թալին համայնքի Արագածավան բնակավայրում իրականացվել են 4 (չորս) հանրային քննարկումներ: Համայնքի ներկայացուցիչները և Արագածավան բնակավայրի շահագրգիռ հանրությունը 3 (երեք) հանրային քննակման ընթացքում նախատեսվող գործունեության վերաբերյալ արտահայտվել են դրական, իսկ 4-րդ հանրային քննարկման ժամանակ դրսևորել են բացասական դիրքորոշում:

Պետական փորձաքննական եզրակացության հիմք են հանդիսացել հետևյալ հիմնավորումները.

1. Արագածի պեռլիտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2025 թվականի մարտի 7-ին Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցած 4-րդ հանրային քննարկման մասնակիցների կողմից բարձրացված հարցերը, բացասական կարծիքները և մտահոգությունները կապված են եղել Ընկերության կողմից իրականացվող և նախատեսվող արդյունահանման աշխատանքների և հանքանյութի հետագա վերամշակման հետ: Նշվել է, որ ներկայումս արդյունահանման և վերամշակման աշխատանքների արդյունքում՝ Ընկերությունը, որպես ընդերքօգտագործող, չի իրականացնում բավարար միջոցառումներ, այդ թվում՝
 - ջրցան՝ ճանապարհների և հանքային դաշտի փոշեգոյացումը կանխելու նպատակով, որի հետևանքով, հատկապես քամու ժամանակ, բնակավայրն ու հարակից այգիները ծածկվում են փոշու ամպերով,
 - արդյունաբերական թափոնների տեղադրումը կատարվում է համայնքային հողի վրա՝ համայնքի կողմից լցակույտերի համար հատկացված տարածքից դուրս,
 - Ընկերության կողմից չի իրականացվում բավարար սոցիալական աջակցության ծրագիր ազդակիր համայնքում /բնակավայրում:

Թալինի համայնքապետարանը ներկայացրել է իր բացասական դիրքորոշումը՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքը Ընկերությանը վարձակալությամբ տրամադրելուն և տվյալ տարածքում արդյունահանման աշխատանքներ իրականացնելուն, ինչը վկայում է 4-րդ հանրային քննակման արձանագրությունը և տեսաձայնագրությունը: Հայցվող տարածքը հարակից է արդյունահանման աշխատանքներ իրականացվող տարածքին:

2. Հավաստի տեղեկատվություն ստանալու նպատակով՝ հանրային քննակման ընթացքում բարձրացված մտահոգությունների վերաբերյալ իրականացվել է հարցում համայնքապետարանին ու բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին, ինչի արդյունքում հանրային քննարկումների ընթացքում բարձրաձայնված



մտահոգությունները հիմնավորվել են ներկայացված տեղեկատվությամբ և բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից տրամադրված կարծիքով /ԱԿՏ N 163, 2024 թվականի հուլիսի 25/: Ակտով արձանագրվել են մի շարք խախտումներ, այդ թվում՝ շրջակա միջավայրի նախարարության կողմից 2017 թվականի օգոստոսի 21-ին «Հիդրեն Գոլդ» ՍՊԸ-ի Արագածի պեռլիտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրամադրված ԲՓ-78 պետական փորձաքննական դրական եզրակացությունով հաստատված՝ բացահանքի տարեկան արտադրողականության և վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագծում առկա չափաքանակների գերազանցում, գյուղատնտեսական նշանակության արոտավայրի L-565 լեռնահատկացման ակտով տրամադրված տեղամասին կից 5364.9 մ² մակերեսով տարածքի ընդերքօգտագործման և արտադրական թափոնների կուտակման հետևանքով հողաբուսական շերտի վնասում և այլն:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերոնշյալ հիմնավորումները և Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ «Հիդրեն Գոլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ, առաջատար մասնագետ

Աստղիկ Վարդանյան